## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Ն-1 ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 2018թ հունվարի 29-ին կնքված պայմանագրում 2018թ մայիսի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: պայմանագիր, կնքված 2018թ-ի.

ժամանակահատվածի համար:

Փոփոխության նկարագրություն:

Համաձայնագրի գինը կազմում է 174 000 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում */ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի թիվ 509-Ն որոշում/:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Ն-1-1**
**Պետության կարիքների համար շինարարական աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման**

ք. Երևան <<25>> մայիսի 2018թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018թ ապրիլի 26-ի թիվ 509-Ն որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018թ. հունվարի 29-ին կնքված ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Ն-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա համայնքում վթարված հենապատի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարումը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն Պայմանագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

**Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 174000 (հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ, ընդ որում՝

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

**2. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011005718
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<< Հալդի Քոնսալթ >> ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>>ՓԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀՎՀՀ 08417251

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
«29» հունվարի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Ն-1-1 համաձայնագրի

## Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 2 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա համայնքում վթարված հենապատի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ | | | | | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011005718
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<< Հալդի Քոնսալթ >> ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>>ՓԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀՎՀՀ 08417251

(ստորագրություն) Կ.Տ.